

կաւէն տարբերութիւն չեն ունենար: Իսկ որոշելու հնարքը աս է. երբոր մարնային վրայ բարկ քայտա կամ ծովային թթուուտ (որ ջրաբլորեան թթուուտ՝ ալ կ'ըսուի) լեցնես, կը սկսի եռալ ու քաղցուի՝ պէս եփ կ'ելլէ:

Մարնա կ'ըլլայ որ 100 մասին 90<sup>ը</sup> կիր է: Արբոր մարնայի մը 100<sup>ն</sup> 60<sup>էն</sup> ինչուան 75 մասը կիր է, շատ պարարտ կ'ըլլայ. գործածելու համար խիստ աղէկ տեսակը ան է որ 100<sup>ն</sup> գոնէ 30<sup>ը</sup> կիր է: Ամենէն քիչ պարարտութիւն ունեցողները բոլորովին կաւի կրնմանին. պարարտները շատ աղէկ չեն ան երկիրներուն համար՝ ուրոնց մեծ մասը կրային հողէ, բայց խիստ յարմար են կաւոտ հողերուն: Մարնան կը գործածուի՝ պարարտացնել ուզած դաշտիդ մէջ տարածելով:

Հ. Գաճը, կիրն ու մոխիրը երկիրը աղէկցնելու կուգան թէ չէ.

Պ. Այնիւթերս հողերէն տարբեր աղքեցութիւն մը ունին որ կ'ազդէ նաև բուսոց վրայ. և այնչափ տարբեր է ասոնց զօրութիւնը որ եթէ չափէն աւելի ըլլան, բոյսերուն փնաս կուտան, բայց վերի ըսուած նիւթերուն հետխառնելով գործածուիննէ՝ վախ չկայ:

Ճ Ա Ր Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Արդեան ջրհոր:

ԱՐԴԵՍԵԱՆ կ'ըսուին ան ջրհորները կամ աղբիւրներն որ գետինը ծակելով ջուր կը բխեն: Այս արուեստը շատ հին պիտի ըլլայ, վասն զի այսպիսի օգտակար գիւտին ոչ ժամանակը, ոչ տեղը և ոչ հնարողը կը գիտցուի:

1 Գ.Ղ. Acide hydrochlorique. 2 Արա:

3 Գ.Ղ. Puit Artésien. Ոմանք կը կարծեն թէ աս տեսակ ջրհոր նախ Գաղղիոյ Արդուա նահանգը ծակած ըլլալուն՝ Արդեան կոչուած ըլլայ: Աս մտքով Արդուա ջրհոր գրուեցաւ Ա հատորին 303 էրեսը:

իսկ շատ հին գիւտ ըլլալուն նշանն աս է՝ որ այսպիսի ջրհորներ փորուած են Ազիպոս, Չինուամայն ու Ատալիա Սոտենայի դքսութեան մէջ. իսկ Գաղղիա Արդուա գաւառին ջրհորը կ'ըսուի թէ 1126<sup>ն</sup> փորուած ըլլայ: Իայց նոր ատենները տեսնելով աս գիւտիս օգտակարութիւնը, թէ երկրագործութեան՝ թէ կենաց պիտոյից՝ առողջութեան և թէ մեքենականութեան, շատ ծաղկեցաւ, և հարիւրաւոր այսպիսի ջրհորներ փորեցին Գաղղիա, Անգղիա, Գերմանիա, Պրուշի երկիրը ու Աւրուպայի ուրիշ շատ կողմերը. և ասով մեր ժամանակներուն շատ պատիւ կ'ընէ:

Ալքիմիքոս մտածեց որ թէ որ խել մը խորութեամբ գետինը ծակէ, գետնի տակի անշարժ ջուրը ան ծակին մէջը կրնայ հաւաքել. և ջուրը գետնին տակ աւելի խորունկը ծակտիք ունեցող կարգերուն մէջ կրնայ տարածուիլ. և ասով թաց երկիրը ցամքեցնելով՝ երկրագործութեան շատ օգուտ ըրաւ:

Այնչէ ետքը Սիթ գտաւ որ գետնին որ կարգ կարգ է, և աս կարգերը շատ տեղ դէպ ՚ի շեղ կը տարածուին. և աս կարգերէն մէկը ծակելով՝ կրնանք ջուրը թողուլ որ երթայ, թէ որ ան ծակած կարգը ծակտիք ունենայ կամ թափանցելի ըլլայ: Այս կերպ արդեսեան ջրհորներն ալ հիմա շատ գործածել սկսան՝ որ լճային երկիրները ցամքեցնեն, որպէս զի բնակութիւն եղած տեղուանքին օդը լացնեն: Գաղղիա շատ տեղ ծակեցին այսպիսի ջրհորներ: Իսկ թէ որ հողին կարգը անթափանցելի ըլլայ, ջուրը կրնանք վեր հանել: Այսանկով յայտնի եղաւ որ գետնի տակի կարգերուն շեղութենէն կը կախուի գետնի տակի ջուրին ընթացքը. և որովհետեւ ջրակշռութեան օրինաց նայելով՝ ջուրը իր առջի մակերևութին բարձրութիւնը կ'ելլէ, ուստի թէ որ տեղ մը բարձր անթափանցելի կարգեր ըլ-

լան, ու հոն տեղը ծակ բացուի, ջու-  
րը ծակին մէջը կը բարձրանայ. և չէ  
թէ միայն ինչուան ծակին բերանը,  
հասպա շատ անգամ աւելի ալ բարձրա-  
նալով շատրուան մը կը ձևանայ:

Իս ճամբով շատ տեղեր որ առա-  
ջուց ջուրի պակասութիւն կը քաշէին,  
հիմա առատ ջուր կ'ունենան. և եր-  
կրիս ան կողմերն որ առաջ ցամաք  
էին, հիմա կրնան մաքուր զուտ ու  
առատ ջուր ունենալ:

Հետ զհետէ ծակող պողպատը եր-  
կրնցընելով և ուրիշ գործիքներով և  
անուի կամ ձիու ուժով կարծր մար-  
միններ ծակեցին ու հասան մինչև 600  
կամ 800 սոք խորութիւն. և գրեթէ  
ամէն անգամ յաջողութեամբ:

Ալ ալանս կ'ըսէ թէ գետինը ծակե-  
լու համար հովին ուժն ալ կրնայ  
մարդ բանի բերել. աս տեսակ հովէն  
շարժող գործիքն ալ կը ստորագրէ, ու  
կ'ըսէ թէ կարծր քարերը ծակելու հա-  
մար գէրը զարնուածքի շարժմունք  
մը պէտք է ունենայ, բայց պիտի պը-  
տրտելով ըլլայ, թէթե ու ծանր  
զարնուածք. անանկ որ ամէն մէկ  
պտոյտքին զարնուածքն ըլլայ տասը  
կամ տասուերկու կամ տասնչորս  
անգամ, կամ քիչ մը աւելի եղեր է  
կամ պակաս՝ ծակելու յատակին կար-  
ծրութեանայելով: Իսկ կակուղ մար-  
մինները ծակելու ու ծակը մաքրելու  
համար՝ պտոյտը միայն բաւական է:

Ալ ալանսի գործիքը իրեք ոտնաչափ  
ու վեց մատնաչափ տրամագծով հո-  
րիզոնական անիւ մը ունի որ վրան  
տասը կամ տասուերկու կամ տասնը-  
չորս թւեր հաստատած են. անուին  
մէջտեղի փայտէ հաստ առանցքը մէկ  
ոտք երկայնութիւն ու մէկ ոտք տրա-  
մագիծ ունի, ու երկու ծայրերը  
հաստատուն երկրթէ անուրներով ա-  
մրըցուցած են: Ինուին առանցքին  
մէջտեղը թափծու երկրթէ ձող մը  
անցուցած է, որ կը ծառայէ թէ ա-  
նիւը պտրտցընելու, և թէ ծակող եր-  
կաթը մէջէն վեր վար տանելու:  
(Իսկող երկաթին ձևն որ երկրթէ ձո-

ղին մէջը կը մտնէ, երկրնկեկ քա-  
ռակուսի է՝ երկու մատնաչափ թանձր,  
իրեք մատնաչափ լայն, ու հինգ կամ  
վեց ոտք երկայն: Ինիւը պտրտցընե-  
լով թւերը լծակի մը կը հանդիպին  
որ ծակելու ձողին զարնուածքի շարժ-  
մունք մը կուտայ: Իայց թէ որ պէտք  
ըլլայ կակուղ մարմին մը ծակել կամ  
ծակը մաքրել, աս թւերը պէտք է  
հանել: Իանելու ատեն ծակելու  
ձողէն չորս կամ հինգ ոտնաչափ չուան  
կամ շղթայ կախած է, ու ան ձողին  
վրայ պտուտակով ուրիշ ծակելու ձող  
մը հաստատած է. հետ զհետէ պէտք  
է ասանկ ընել, մինչև որ ծակը բա-  
ւական խորունկութիւն ունենայ:  
Չուանը կամ շղթան լծակին վրայ  
հաստատած է, ու ճախարակի մը վը-  
րայէն կ'անցնի, ու անուրով մը ծակե-  
լու ձողին վրայ կը հաստատեն՝ որպէս  
զի չորուի: Ինուին մօտիկ եղած լը-  
ծակին թւեր վերէն ՚ի վար ուղղա-  
հայեաց է. իսկ շղթան վրան հաս-  
տատուած թւեր՝ հորիզոնական:

Երկրագիտութեան և արուեստից  
մէջ շատ օգտակար բան է գետինը  
ծակելը. անոր համար հիմա շատ տե-  
սակ գործիքներ հնարած են՝ որ հոս  
տեղը բացատրելը երկայն կ'ըլլայ, ու  
ձևերը աչքի առջև չունենալով՝ հաս-  
կընալը դժուար: Իայց թէ որ մեր  
ուսումնասէր երիտասարդք աս ուս-  
մանս փոյթ ընեն բարերարաց պաշտ-  
պանութեամբը, ատենօք իրենց հայ-  
րենեաց շատ օգուտներ կրնան ընել:

Իս ետքի ատեններս 1842ին լրա-  
գիրները ծանուցին թէ Վելձիա դեր-  
ձակ մը գործիք մը հնարել է որ 75  
ժամու մէջ 110 ոտք խորութեամբ  
արդեսեան ջրհոր մը ծակեր են անով:  
Երազիրները կ'ըսեն թէ աս նորա-  
հնար գործիքով ամէն տեսակ դժուա-  
րութեանց դուրաւ կ'ըլլայ յաղթել.  
նոյնպէս մարդ կրնայ ուզածին պէս  
ջուրը արգիլել կամ թողուլ որ բխէ:  
Իայց գործիքին ստորագրութիւնը  
չեն ընել:

Իս գետնին տակի ջուրի ընդունա-

րաններն որ մէկ մը ծակուին , առջի բերանը ջուրը շատ անգամ սաստիկ ուժով վեր կը ցատքէ . և մեծ նշան է թէ ատ տեսակ ջրհորներուն ջուրը շատ առատ պիտի ըլլայ : Պրուք ա- նունով պարոն մը Մոնտրա՝ պարտէ- ղին մէջը ջուր չունենալով՝ այսպիսի ծակ մը բացաւ 360 ոտք խորութեմ , ու տրամագիծը չորս կամ հինգ մատ- նաչափ . և այնպիսի առատ ջուր բը- խեց , որ չէ թէ միայն տանը չորս կող- մը ջրով լեցուեցաւ , հասաւ մօտի ե- ղած գինետուններն ալ կոխեց : Ար- կու հոգի ջանացին որ ծակը փայտէ խցանով մը գոցեն , բայց ջուրին ուժը զանոնք ետ հրեց . և ոչ երկրթէ խցա- նով կը ցան ջուրը բռնել : Ատքը ծա- կին բերանը մետաղէ եղէգ հաստա- տելով , հազիւ կը ցան ջուրը սանձել : Արիշ տեղ մ՝ ալ ծակին բերանը գո- ցեցին , բայց ջուրն անանկ ուժ տուաւ որ տասնըհինգ կանգուն տարածութեմ չորս դիէն ցատքեց . ու թէ որ ջուրին ազատ ճամբայ չտային՝ քովի պատե- րը կը փլցընէր :

Ատքի ատեններս Փարիզ կըրնէլ ըսուած տեղը ջրհոր մը բացին , որ օ- րագիրները աս ջրհորին վրայ շատ խօսեցան ու դեռ ալ կը խօսին , որով- չետեւ իմաստուն բնագէտք վրան շատ քննութիւններ կ'ընեն օրէ օր : Եւ ջրհորս ծակելու համար շատ զժուա- րութիւններու յաղթելով՝ ուժը տա- րի աշխատեցան : Բերանը ծակելու ատեն 6 մասնաչափ էր : Իրեք ան- գամ ծակելու գործիքը կոտրեցաւ , մէկ մը ձողը , երկու անգամ ալ գջի- րը , որ երկու անգամուն կոտրած կտորները դուրս հանելու շատ աշ- խատանք քաշեցին . առջի անգամուն 15 ամիս , երկրորդ անգամուն 3 ա- միս աշխատեցան . երրորդ անգա- մուն վար հրեցին , որով՛չետեւ յատա- կը կակուղ գտան : 1841ին փետրուա- րի ամսուն ծակելու ձողը յանկարծ սկսաւ շուտ շուտ վար իջնալ , անով իմացան որ ջուրին ընդունարանը հա- սեր են . և իրաւ քանի մը ժամէն

սկսաւ ջուրը առատ բխել , անանկ որ ամէն ժամ գրեթէ 324 քառակուսի ոտք ջուր կ'ելէր : Եւ ջրհորին խո- րութիւնը հասաւ մինչև 16 ոտք . ջուրը լաւ ու յարմար ամէն տնական գործածութեան :

Եւ ջրհորը փորելու ատեն բնա- բանք հողուն խորունկը տաքութեան աստիճանը քննելու ալ մասնաւոր փոյթ ունեցան . և նախ գիտնալու է որ Փարիզու գիտարանը ուժտունոտք խորութեամբ Ռէսմիւրի ջերմաչա- փը 9½ աստիճան է . իսկ կըրնէլի ջրհորին մէջ 1212 ոտք խորութեամբ 19 աստիճան եղաւ . 1572 ոտք խո- րութեամբ 21 աստիճան . իսկ 1640 ոտք խորութեամբ՝ գրեթէ 22 աստի- ճան : Իսկ որ ջրհորին խորութիւնը հասնէր մինչև 2700 ոտք , ան ատեն ջուրին տաքութիւնը կ'ըլլար 32 աս- տիճան , որ բաղնիքի և ուրիշ պիտա- նաւորութեանց կրնար ծառայել :

Արդեսեան ջրհորներուն շէնքը պա- կասութիւն որ չունենայ , ջուրը ա- մենեին չպակսիր . անոր համար ե- ղէգները կամ փողերը դնելու շատ զգուշութիւն պէտք է , որ չըլլայ թէ ջուրը ջրհորին բերանը չհասած՝ ծա- կին մէջ թափանցելի կարգերու հան- դիպելով՝ անոնց մէջ տարածուի ու կորսուի : Վաղղիա եղան արդեսեան ջրհորներ՝ որ ջուրերնին պակսիլ սկը- սաւ . բայց պակսութեան դարմանը բ- նելով , ջուրը չպակսելէն զատ՝ աւել- ցաւ ալ : Արդուա գաւառին ջրհորն որ 700 տարիէն աւելի է որ փորուած է , միշտ ջուրը միակերպ առատ է , մի- այն թէ ամէն քսանըհինգ տարին հեղ մը փողերը կը փոխեն՝ որ փայտէ են :

Եւ տեսակ ջրհորներուն հարկաւո- րութիւնը և օգտակարութիւնը տես- նելով պէտք էր աւելի ընդարձակ ու դեռ տեղն՝ ի տեղը խօսիլ վրան . բայց օրագրիս չափաւորութիւնը ասկէ երկան խօսելու թող չիտար : Արի- շեցընէնք միայն մեր ուսումնասիրաց՝ որ Աւրոպայի իմաստունք շատ հա- տորներ տպած են աս բանիս վրայ :